

November 10, 2015

Ցեղասպանութեան զոհերու սրբադասումը. Ի՞նչ է անոնց սրբադասման իմաստը

Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան



Հայոց Ցեղասպանութեան զոհերու 75-ամեակին առիթով 1989 Ապրիլ 29ին հրապարակուած հաղորդագրութեան մը մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ. «կ'առաջարկէին շարունակել Ցեղասպանութեան զոհերու սրբադասման նախապատրաստական աշխատանքները»: Արդարեւ, նահատակներու կրօնական ոգեկոչման գաղափարը սկիզբ կ'առնէր Հայաստանի Առաջին Հանրապետութեան (1918-1920) տարիներուն, երբ կառավարութիւնը արդէն պաշտօնապէս

դիմած էր Գեորգ Ե. կաթողիկոսին, որպեսզի մարտիրոսները ընդգրկուին Հայ եկեղեցւոյ ծիսական օրացոյցին մէջ: Նոյեմբեր 2014-ին, զոյգ կաթողիկոսներու հովանաւորութեամբ կայացած Եպիսկոպոսական համաժողովը յայտարարեց, թէ Հայոց Տեղասպանութեան զոհերը պաշտօնապէս պիտի սրբադասուին 2015 Ապրիլ 23-ին: Հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ Սուրբ Էջմիածնի մէջ, ուր Տեղասպանութեան 100-ամեակին առիթով Հայոց եկեղեցւոյ Նոր սուրբերը հռչակուեցան եւ մեծարուեցան:

Հայ եկեղեցւոյ կողմէ վերջին սրբադասումը կայացած էր աւելի քան 500 տարի առաջ: Սրբադասումը սրբութեան հռչակման վերջին հանգրուանն է որով եկեղեցին կը հաստատէ թէ անձ մը կամ խումբ մը Աստուծոյ սրբութիւնը բաժնող կը նկատուին եւ թէ անոնց կեանքը Քրիստոնէական Աւետարանի ճշմարտութեան եւ վաւերականութեան վկայութիւնն է: Սուրբերը կը միանան Աստուծոյ եւ կը բաժնեն երկնային կեանքի յաւերժականութիւնը ամէն պղծութենէ հեռու՝ Աստուածային անվախճան կեանքի մը մէջ, եւ կը գտնեն իրական կեանքը Աստուծոյ կողքին: Այս առումով հնագոյն ժամանակներէն սկսեալ իրենց օրինակելի կեանքով սուրբերը քրիստոնէութեան անբաժանելի մասնիկն են եւ իրենց յատկանշական տեղը ունին «ՄԵԿ, Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ եկեղեցւոյ» վարդապետական, ծիսական եւ պաշտամունքային աւանդութիւններուն մէջ:

Վերջին երեք տասնամեակներուն Հայոց Տեղասպանութեան զոհերու սրբադասման հարցը յանձնուած էր զանազան յանձնաժողովներու եւ եկեղեցական պատասխանատուներու սեղմ շրջանակի մը: Այս ընթացքին սրբացման աստուածաբանական իմաստը եւ անոր կապը՝ հաւատամքի եւ բարեպաշտութեան հետ, երբեք լայնօրէն չի ներկայացուեցան հայ հաւատացեալին: Նախ եւ առաջ սուրբերը կը սրբադասուին հաւատացեալներուն համար: Տեղասպանութեան նահատակներուն սրբացումը չի նշանակեր անոնց «պատուոյ շքանշան» շնորհել, այլ զանոնք կը դարձնէ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ Հայց. եկեղեցւոյ աւետարանչական եւ հոգեւոր-կրթական առաքելութիւնը շարունակելու ծառայող օրինակներ: Արդեօք Տեղասպանութեան զոհերու եկեղեցւոյ կողմէ սրբադասումը 100ամեակի առիթով «խորհրդանշական արժէ՞ք» մը կը ներկայացնէ միայն, թէ Նոր սուրբերու հռչակումը պիտի ծառայէ որպէս բացառիկ առիթ մը վերանորոգելու եւ վերակենդանացնելու Հայց. Առաքելական եկեղեցին՝ 21րդ դարուն: Այս հարցադրումը լուրջ խորհրդածութեան կը կարօտի:

Քաղաքական եւ աստուածաբանական հարցեր

Հիմա որ Տեղասպանութեան նահատակները սրբադասուեցան, Հայ եկեղեցին կը գտնուի դաւանաբանական հրամայականի մը առջեւ, այսինքն անոնք այլեւս զոհեր չեն, այլ Քրիստոսի յաղթականները: Այլեւս չենք

կրնար իրենց մահը ողբալու համար հոգեհանգիստներ կատարել, ինչպես որ սովոր էինք: Փոխարենը Ս. Պատարագի ընթացքին պետք է յիշենք իրենց անունները, խնդրելով անոնց միջնորդութիւնը եւ տօնելով իրենց յաղթանակը մահուան դէմ, ի Քրիստոս եւ անոր միջոցաւ::

Յեղասպանութեան յիշատակութեան սգապատիր եւ տխուր մթնոլորտը այժմ պետք է փոխարինուի

«տօնակատարութեամբ»: Չոհերը այլեւս զոհ չեն, այլ սուրբեր որոնք կ'ապրին Աստուծոյ փառքին համար, այսինքն միացած են Աստուծոյ՝ յաւիտենական կեանքի մը մէջ, գերծ ամեն պղծութենէ եւ գտած են Անոր ճշմարտութիւնը: Ուրեմն հարց կը ծագի թէ արդեօք Յայերը պատրա՞ստ են իրենք զիրենք նկատելու Քրիստոսի մահուան եւ յարութեան վկաներ, որու համար հարիւր հազարաւորներ իրենց կեանքը տուին - փոխանակ տեւաբար իրենք զիրենք զոհեր նկատելու:

Քաղաքականօրէն Յեղասպանութեան 50-ամեակէն ի վեր Յայերը հաւաքաբար ընդհանրապէս ամբողջ աշխարհէն եւ յատկապէս Թուրքիայէն արդարութիւն կը պահանջեն Յեղասպանութեան մէկ ու կէս միլիոն զոհերուն համար: Մինչ զոհերուն սրբադասումը փաստօրէն (de facto) կը լուծէ անոնց կեանքի համար արդարութեան հարցը, եկեղեցւոյ սուրբերուն համար քաղաքական արդարութեան պահանջը կը մնայ խնդրայարոյց: Առաւել, Թուրքիոյ հետ հողային հարցը կրնայ աւելի եւս կնճռուիլ: Ինչպէս սովորութիւն է այլ սուրբերու պարագային, արդեօ՞ք Յայերու նահատակութեան վայրերը պետք է որպէս սրբավայրեր նկատուին կամ՝ «Սուրբ Յողեր»: Տակաւին շատ քաղաքական անուղղակի անդրադարձներ կան որոնք պետք է ուշադրութեամբ քննարկուին:

Յեղասպանութեան մարտիրոսներու սրբադասումը պետք չէ բնաւ նկատուի որպէս 100-ամեակի իրադարձութեանց յաւելեալ «փայլք» բերող եղելութիւն մը: Նոյնիսկ եթէ Թուրքիան եւ աշխարհի ուրիշ երկիրներ կը շարունակեն ժխտել Յեղասպանութիւնը, սրբադասումը պետք չէ նկատուի իբրեւ այս ուրացման հակադարձ պատասխան մը եւ մեր զայրոյթին մէջ մեր զոհերը մեծարելու գերագոյն ճիգ մը, զանոնք որպէս սուրբեր յայտարարելով:

Մեր զոհերուն հանդէպ անարդարութիւն պիտի ըլլայ նկատի չառնել անոնց Քրիստոսի համար նահատակութիւնը եւ ասոր անդրադարձը մեր կեանքերուն վրայ որպէս անհատներ եւ որպէս ազգ: Ինչպէս աշխարհիկ կեանքի ասօրուան «երեւելիները», եկեղեցւոյ սուրբերը հիացումի եւ հետեւելու արժանի օրինակներ են: Որպէս Յայ քրիստոնէաները պետք է կարենալ ապրիլ սուրբերու արժանիքները եւ հետեւիլ անոնց «երկնային թագաւորութեան» հասնելու օրինակին:

Յեղասպանութեան զոհերու սրբադասումը՝ կը նշանակէ շարունակել անոնց Քրիստոսի վկայութիւնը Յայ եկեղեցւոյ առաքելութեան եւ Աւետարանի քարոզչութեան միջոցաւ:

Դոկտ. Յրաչ Չիլիսկիրեան Օքսֆորտ համալսարանի դասախօս է: